ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 072-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ՅՈՒԼԻ ԴԱԼԻ»ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 09 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ 2.2174 ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ,ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հիմք ընդունելով ՀՀ Տարածքային կառավարման և Ենթակառուցվածքների նախարարության և «ՅՈՒԼԻ-ԴԱԼԻ» ՍՊԸ-ի միջև 13.09.2023 թվականին կնքված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-715 պայմանագիրը և «ՅՈՒԼԻ-ԴԱԼԻ» ՍՊԸ-ի տնօրեն Լիլիթ Փաշինյանի 20.05.2025 թվականի գրությունը՝ պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին.
Արենի համայնքի ավագանին որոշում է.

1. Արենի համայնքի և «ՅՈՒԼԻ-ԴԱԼԻ» ՍՊԸ-ի միջև կնքված 09 հունիսի 2020 թվականի ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենիի համայնքի Խաչիկ բնակավայրի Կվարցիտի 1-ին թաղամաս 2 հասցեում գտնվող 2,2174 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-025-0106-0010, գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման) վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 14.09.2033 թվականը:

2. Տարեկան վարձավճարը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 6 000 000 ՀՀ դրամ և յուրաքանչյուր արդյունահանված օգտակար հանածոյի 1 տոննայի հաշվարկով 1000 ՀՀ դրամ:

3. Տարեկան վարձավճարի 6 000 000 ՀՀ դրամ գումարը վճարվում է հավասար պարբերականությամբ՝ ըստ ամիսների: Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը վճարվում է մինչև հաջորդող ամսվա 15-ը:

4. Արդյունահանված օգտակար հանածոների համար վճարումները կատարվում են մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը ներառյալ՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված հաշվետվությունների հիման վրա:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**